Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՌՈՒԲԻՆԱ ՔԱՂԱՆԹԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՋՆԻՒ ՌՈՒԲԻՆԱ ՔԱՂԱՆԹԱՐԵԱՆ, ՈՐ Ի ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌԴ

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից տեղեկացանք, որ Ռուսիոյ Էիւսիսային մայրաքաղաքում մեծ հանդիսութեամբ նշուելու է Ձեր ծննդեան յոբելեանական տարեդարձը: Մեզ համար անկեղծ ուրախութիւն է համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները յղելու Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքը բերելու մեր ժողովրդի արժանաւոր ու փառանդաշատ զաւակիդ:

Երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստանալով եւ ստեղծագործական Ձեր ողջ կեանքն ապրելով Սանկտ Պետերբուրգում, Դուք անդուլ ու անյոգնաբեկ աշխատանքով երգարուեստի ասպարէզում հասել էք մեծ յաջողութիւնների: Ձեր ասպուածշնորհ ձայնը տասնեակ տարիներ հնչել է Սանկտ Պետերբուրգի եւ աշխարհի բազմաթիւ հռչակաւոր բեմերից, ռադիոյ եւ հեռուստաեթերներից՝ հիացում ու հոգեկան բերկրանք պարգեւելով արուեստասէր հասարակայնութեանը: Ձեր սքանչելի արուեստը արժանապէս գնահատուած է հայրենական ու միջազգային բազմաթիւ մրցանակներով, կոչումներով ու պարգեւներով՝ պատիւ բերելով նաեւ մեր ժողովրդին:

Մենք տեղեակ ենք նաեւ Մայր Հայրենիքի, հարազատ ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անմնացորդ սիրուն ու նուիրումին: Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք գործուն մասնակցութիւն էք բերում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքին՝ արժանանալով բարեխնամ առաջնորդի, հոգեւոր դասի եւ հաւատաւոր հայորդեաց խորին յարգանքին:

Մեծազնիւ Տիկին Քալանթարեան, երգարուեստի անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ բարեջան ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ մեր մեծ Ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած Իր ամենազօր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Զեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին Հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 321